

ՄԱՅԻՍԻԱՆ

ԳԱԲԱԹԱԳԱԳԻԲ

ՔԱՂԱՔԱՆԵՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԼՈՒՆԻՏՐԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ ԵՒ ԵՐԵՎԱՆ 23 ԱՊՐԵԼԻ

1853

ԹԻՒ 59

ՔԱՂԱՔԱՆԵՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձրագույն Ֆեթի Ահմեդ փաշայն Այսերական թերթն օրհնական նախարար կարգեցաւ՝ փոխանակ Նամըք փաշայի որ առաւորական դործոց տեսուչ եղաւ:

— Սիրիսթի նախորդ կուսակալ Սալիմ փաշայն Սէրմիսիկ ընդհանուր կառավարիչ անուանեցաւ:

— Սիրիսթի նախորդ համարակալ Էսաթ Էֆէնտին Էֆէնտին Գաւաթին համարակալ եղաւ:

— Պաղատի Գաւաթին համարակալ լուծիւնը Սիրիսթի վարդապետ համարակալ Իպրահիմ Էֆէնտին յանձնուեցաւ:

— Սիրիսթի ինքնակալը շատ սգալի կորուստ մը ըրաւ վերին Նախախնամուն անփոփոխելի վճռովը: Սիրիսթի երեկոյն օգոստոսափառ Արքայամայրը, որ ինչ միայն վեհափառ Սուլթաննուս՝ այլ նաեւ ամեն ազգի աղքատ և անտերունչ հպատակաց մայրն էր, վախճանեցաւ ի հասակի 48 ամաց: և Այսերական պալատն, ու բոլոր Օսմանեան տէրութեան երկիրները աւ սուղի մէջ ձգեց: Զետեալ երկուշաբթի օրը օգոստոսափառ հանգույնը մարմինը օգալի հանդէսով Չրազանի պալատէն Թօփ քափույի պալատը բերուեցաւ, ուրտեղ թաղման կարգը ըստ ծիսի մահմետականաց կատարուելէն ետքը՝ Սուլթան Մահմուտի իւրական (գամբարանը) տարուեցաւ, տէրութեան բոլոր նախարարաց, բարձր աստիճանի պաշտօնէից, մահմետական կրօնաւորաց և այլոց յուզարկաւորուէ: Փառաւոր Գաղաթին անցնելու ճամբուն երկու կողմը Այսերական զօրաց դունդեր կանգնած էին բաց ի անհամար բազմութեան ազգի ազգի արանց, կանանց և տղայոց, որոնք իրենց առատաձեռն Բարեբարին՝ երախտագիտութե և խորին անհամբովեան վերջին ապացոյցները յայտնելու ժողովուած էին, և ըրած անգարմանելի կորուստուն վրայ դառն արտասուքներ կը թափէին, և Բարձրելուն կամքը կ'օրհնէին: Սոսկ հասարակութիւնը չէր որ սրտակակիծ ողբեր կ'ընէր, այլ տէրութեան պաշտօնեաներէն շատերը չէին կ'ընար իրենց արտասուաց հեղեղը զսպել:

Պաշտօնատարաց ետէն երկու պալատականը հաւաքեալ բազմութեան,

սոկի և արծաթ դրամներ կը սփռէին առատ ձեռքօք:

Հանգուցեալ Արքայամոր բարեբարութիւնները անթիւ են որովհետեւ թանկագին կենդանութեան ժամանակը գըրեթէ ամեն օր մէյմէկ նոր երախտեաց լուրը կ'առնուէր: Հատ տեղեր իւր բարեբարութեանը անջնջելի յիշատակներ թողած է, ինչպէս են զանազան աղբիւրներ և ջրհորներ յօգուտ հասարակութեան, փառաւոր դպրոցներ և հիւանդանոց մը, ուրտեղ բազմաթիւ աղքատներ առանց խտրութեան ազգի և կրօնի ազատ են երթալու, և ձրի բժշկութիւն, կերակուր ու հագուստ ըստանալու: Եւ բարի յիշատակները՝ զոր Օգոստոսափառ հանգուցեալը թողուց աշխարհիս վրայ, իւր փառաւոր անունը անմահ պահելու են ամենուն մտաց մէջ, և թէպէտ դժուար է այսպիսի կորուստեան մը վրայ միջնորդել բայց որովհետեւ Աստուծոյ անքննելի կամօքը մեր սիրտը այս ցաւը կրեց, ուրիշ բան մը չենք կրնար ընել: այլ միայն Աստուածային կամքը օրհնել և անպարտաւորութե առ Բարձրեալն որ մեր առատագուծ Սուլթանին անցին կեանքը յերկար ամա անփորձ և ամեն աշխարհական արկածներէ հեռի պահէ կատարեալ քաջաւորութեամբ, ի միջնորդութեան և ի բարօրութեան բոլոր հպատակաց:

— Հարաւսագրիս 56րդ թերթին մէջ նորահաստատ Օսմանեան Սեղանատան (պանթային) հիմնաւոր պայմանները ծանուցեցին: Եւս բազմօգուտ ընկերութե վրայօք ամեն առիթ գտած ժամանակ նիս խօսելու կը փութամք, որովհետեւ Օսմանեան երկիրներուն բնակչաց բարօրութեը գլխաւոր պատճառներէն մէկը պիտի ըլլայ՝ մանաւանդ վեհազնեայ կառավարչին շնորհօք:

Աստի այս երևելի Սեղանատան քանի մը պայմաններն ալ այս տեղս կը համառօտեմք:

Հնդեռասանամեայ պայմանաժամին լրանալէն ետքը, Սեղանատան կառավարութիւնը Այսերական տէրութե հաճութեամբը՝ նորէն նոյն ընկերութե պիտի յանձնուի (եթէ ուզելու ըլլայ) տասնամեայ նոր պայմանաժամով: Բայց Արքունի գանձարանի կողմէն դրամական օգնութիւն չպիտի ըլլայ, և ուրիշ ընկերութիւն մը ինչ գաշինքով յանձնառու ըլլալ ուզէ եւ այս ընկե-

րութիւնը նոյն գաշինքով նախամեծար համարուելու է:

Տօկոսիք վճարող դրամաւորութեը, որ 132 միլիոն դահեկանի չափ են, ընկերութիւնը առանց պակասի պիտի փոխանակէ պատրաստ դրամով:

Ընկերութիւնը որ այս թղթադրամներուն փոխարէնը հատուցած պիտի ըլլայ, տասնութհինգ տարին լրանալէն ետքը՝ զանոնք Տէրութեան գանձարանին պիտի տայ առանց տոկոսեաց: Եւ այս վճարումը վերջին վեց տարուան մէջ պիտի ըլլայ, կամ տարուէ տարուէ կամ կանխիկ՝ հարիւրին 6 տարեկան շահը վար զարնելով:

Եւսնց տոկոսեաց թղթադրամները որ 45 $\frac{1}{2}$ միլիոնի կը հասնին, հաւասար գնով պիտի առնուի և տրուի, և ընկերութիւնը առնելիքէն կամ տարիքէն միայն երրորդ մասը այս թղթադրամով պիտի ընդունի և տայ: Բայց տոկոսեաց եղած թղթադրամներուն փոխարէն ընկերութեան առանց տոկոսեաց դրամաւորութե ընդունելու ամենին մէկը ստիպուելու չէ, որովհետեւ անոնց փոխարէնը պատրաստ դրամով պիտի վճարուի:

Ընկերութիւնը առաւորական պարտաւորակները կտրելով (սքոնթով) վճարելու է. նմանապէս իրեն յանձնուած մուրհակներուն գումարները հաւաքելու է:

Ընկերութիւնը պատուաւոր մարդոց հետ հաշիւ բանալով իրեն առանց տրուած թէ պատրաստ դրամը, թէ դրամ չի կարուած: սոկի և արծաթը, և թէ մուրհակներն ու փոխանակադրանքը առանց տոկոսեաց պիտի ընդունի և այս առանգներուն գումարին չափով տէրերուն կողմէն իրեն վրայ քաշուած փոխանակադրանքը պիտի հատուցանէ:

Օսմանեան երկիրներուն ներքին գաւառներուն վրայ կամ օտար տէրութեց երկիրներուն վրայ փոխանակադրանքը պիտի մատակարարէ:

Ընկերութեան յանձնառու եղած պայմաններուն և անոնց գործադրութեան պատճառութեք ծախուց և վեհապետ փոխարէն Այսերական գանձէն շնորհուելիք 30 միլիոն տարեկանը Նախօրից և Բուսէլից ընդհանուր եկամուտքէն, կամ Եգիպտոսի հարկէն և կամ Այսերական որ արդիւնքէն պատշաճ համարուելու ըլլայ նէ, անկէ պիտի ջրհորհուի:

Վզընաւորութեան օգնութեան համար կանխիկ շնորհուելիք 30 միլիոն դահեկանը ընկերութիւնը առանց տոկոսեաց ետ պիտի դարձունէ տասնութհինգ տարին լրանալէն ետքը:

Վեկ տարուան բոլոր ծախքերը վեհապետէն ետքը, զուտ մնացած օգուտէն՝ 200 միլիոն դրամադրոյն հարիւրին 5 տոկոսիքին չափ պիտի հանուի: Եւս գումարը հետեւեալ կերպով պիտի բաժնուի. հարիւրին 15ը ընկերութիւնը հատաւորներուն և հարիւրին 85ը Սեղանատան բաժանակիցներուն պիտի տրուի ամէն մէկուն ունեցած բաժնինը: Եւս համեմատ, ասոնք ալ կ'ուզեն ընկերութիւնը հաստատողներէն ըլլան՝ կ'ուզեն դուրսէն ըլլան:

Ընկէ ետքը մնացած գումարէն հարիւրին 25ը պահուող պիտի դրուի, որ ընկերութե հաստատողներուն և բաժանորդներուն կը պատկանի: Եւս պահեստի գումարը ընկերութե հաստատութեանը համար եղած սկզբնական ծախքը վճարելու համար և ըստ դիպաց իմն պատահելիք վնասները ծածկելու համար պիտի գործածուի:

Մնացած գումարէն հարիւրին 25 ալ պիտի հանուի յօգուտ հաստատողաց ընկերութեան, այս ձեռնարկուելի կազմելու և կարգադրելու աշխատանքը փոխարէն:

Վեհապետ մնացած գումարէն հարիւրին 25 ալ վերը յիշուած կերպով պիտի բաժնուի, այսինքն հարիւրին 15ը ընկերութե հաստատողներուն և հարիւրին 85ը բաժին ունեցողներուն պիտի տրուի:

Վեհապետ յայտնի է որ վեհափառ Սուլթանին առատագութեան շնորհօք բարեխնամ կառավարութեան կողմէն ամեն ժամանակ հոգ կը տարուի որ Այսերական երկիրներուն մէջ ուսմունքն ու դիտութիւնները ծաղկին:

Եւս ուսումնասիրութեան կամ գիտութեանց բարձր պաշտպանութեան նոր ապացոյց մը տարու մտօք՝ բարձրագոյն կառավարութիւնը տնօրինեց, որ Մայրաքաղաքիս մէջ տղայոց ընդհանուր կրթութեան համար բացուած նախակրթական ուսումնասիրանքներուն պէս՝ Այսերական տէրութեան երկիրներուն ամեն մէկ կողմը մէյմէկ դպրատուն բացուի՝ արքունի գանձուն ծախքերը, որն որ վեհափառ ինքնակալին բարոնէյ Գաւառն նոր յիշատակարանները պիտի ըլլան:

